

ՀԱՐԿՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՄԵՐԻ ՓԱՆՈՍՅԱՆ

Հոդվածում ուսումնասիրվել են հարկման արդյունավետությունը բնութագրող հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը, ՀՀ-ում ուղղակի և անուղղակի հարկերի տոկոսային հարաբերակցության ցուցանիշն ու ստվերային շրջանառության ծավալների ազդեցությունը հարկման արդյունավետության տեսանկյունից: Կատարված վերլուծություններից պարզ է դառնում, որ թեև ՀՀ-ում ԱԱՀ-ի հոսքերի կառավարման արդյունավետությունը բարձր է, սակայն ցածր են հարկազանձման դիվերսիֆիկացիան ու տարբերակված հարկային եկամուտների ներհոսքը. հարկային բեռը հիմնականում ուղղված է սպառմանը, ինչը, ազդելով գնողունակության մակարդակի վրա, ազդում է նաև ապրանքի գնով պայմանավորված պահանջարկի առաձգականության վրա: Բարձր հարկային բեռին զուգընթաց՝ ցածր է բնակչության կյանքի որակը, ինչպես նաև գոյություն ունի պատճառահետևանքային կապ հարկատուների վարքագծի ու ստվերային շրջանառության ծավալների միջև: Այս խնդիրների հիմնական պատճառը տնտեսության հարկային ներուժի սոցիալական ու տնտեսական անհավասարակշռությունն է:

Վերոնշյալ մեթոդների կիրառմամբ հարկման արդյունավետության մակարդակի գնահատումը բավականին բարդ է ու ոչ միանշանակ, քանի որ այս ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ են սոցիալական բոլոր խմբերի շահերի հիմնավորված զուգակցում ու հետևողական պաշտպանություն, ճյուղային ոլորտներում հարկային բեռի անհավասարաչափ բաշխման արդարացիության հիմնավորում ու ստվերային շրջանառության ծավալների կրճատմամբ՝ հարկատուների օրինապահ վարքագծի ձևավորում: Այնուամենայնիվ, հարկման արդյունավետության մակարդակը կբարձրանա, եթե պետությունը կարողանա հավասարակշռել իր ֆինանսական միջոցների պահանջարկն ու հարկատուների վճարունակությունը՝ հաշվի առնելով նրանց կենսամակարդակն ու սոցիալական պատկանելությունը:

Բանալի բառեր - *հարկման արդյունավետության գործակից, համախառն ներքին արդյունք, հարկային բեռ, արդարացիության սկզբունք, ուղղակի հարկեր, անուղղակի հարկեր, ստվերային տնտեսություն, սոցիալական անհավասարություն*

Պետությունը մշտապես կանգնած է օպտիմալ հարկազանձման խնդրի առջև, որը հաճախ փորձ է արվում լուծելու հարկային բեռի հավասարաչափ ու արդարացի բաշխման միջոցով: Հարկային բեռի օպտիմալ բաշխումը նպաստում է մի կողմից բոլոր մակարդակների բյուջետային մուտքերի պատշաճ համալրմանը, իսկ մյուս կողմից համա-

խառն ներքին արդյունքի վերաբաշխման շնորհիվ այն թույլ է տալիս իրականացնել սոցիալական տարբեր ծրագրեր՝ ապահովելով հարկատուների և պետության շահերի հաշվեկշռվածություն:

Տարբեր երկրներում հարկային բեռի օպտիմալ մակարդակը տարբեր է՝ կախված տվյալ երկրում կիրառվող հարկման մեխանիզմներից, սակայն գոյություն ունեն հարկման արդյունավետությունը բնութագրող ընդհանրական ցուցանիշներ, որոնք կիրառվում են միջազգային վերլուծություններում ու նպատակահարմար են համեմատականներ անցկացնելիս:

Հարկման արդյունավետության մակարդակը բնութագրող ամենահայտնի և գործնականում լայնորեն կիրառվող ցուցանիշը հարկային եկամուտների (ներառյալ սոցիալական վճարները) և համախառն ներքին արդյունքի հարաբերակցությունն է: Որքան բարձր է այդ ցուցանիշը, այնքան բարձր են հարկման արդյունավետությունն ու պետության կարգավորիչ դերը, և ընդհակառակը:

Հայաստանի Հանրապետությունում այդ ցուցանիշը 2021 թ. հավասար է եղել 22.7 %-ի:

$$\text{Հարկեր} / \text{ՀՆԱ}_{(2021)} = 22.7 \%$$

Համեմատության համար հարկ է նշել, որ 2020 թ. այդ ցուցանիշը եղել է 22.4 %, հետևաբար 2021-ին հարկեր/ՀՆԱ ցուցանիշը բարելավվել է 0.3 տոկոսային կետով¹, ինչը, ըստ ՀՀ կառավարության 2021 թ. հաշվետվության, հնարավոր է եղել հարկային վարչարարության բարելավման շնորհիվ: Սակայն պետք է արձանագրել, որ այս դրական փոփոխությունը հիմնականում տեղի է ունեցել համախառն հարկերի մասնաբաժնում ավելացված արժեքի հարկի գծով մուտքերի ավելացման շնորհիվ:

Աղյուսակ 1

ԱԱՀ-ի գծով ՀՀ պետական բյուջեի մուտքերը (մլրդ դրամ)²

	2020 թ. փաստ.	2021 թ. փաստ.	2021 թ. 2020 թ. նկատմամբ (%)	2021 թ. և 2020 թ. տարբերությունը
Ավելացված արժեքի հարկ	471.6	556.0	117.9 %	84.4
Ներմուծումից, այդ թվում՝	283.8	336.7	118.6 %	52.9
ԵԱՏՄ երկրներից	107.3	137.4	128.1 %	30.2
Ներքին շրջանառությունից	187.8	219.2	116.8 %	31.5

¹ Տե՛ս ՀՀ 2021 թ. պետական բյուջեի կատարման վերլուծություն, 2021, էջ 152:

² Տե՛ս նույն տեղը, էջ 166:

2021 թվականի արդյունքներով արձանագրվել է ՀՆԱ-ի 6.982.8 մլրդ դրամ մակարդակ՝ կանխատեսված 6.395.3 մլրդ դրամի դիմաց: ՀՆԱ-ի կանխատեսված և փաստացի ցուցանիշների տարբերությունը կազմում է 587.5 մլրդ դրամ: Վերջինս այլ հավասար պայմաններում համարժեք է 46.3 մլրդ դրամ ԱԱՀ-ի՝ հաշվի առնելով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի հիմքում դրված 22.5 % հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ հարաբերակցությունը և ԱԱՀ-ի փաստացի մուտքերի կշիռը (35 %) հարկային եկամուտների և պետական տուրքերի մեջ ($587.5 * 22.5 \% * 35 \%$): 2020 թվականի համեմատ հարկային եկամուտներն ու պետական տուրքերն աճել են 14.6 %-ով կամ 201.7 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ԱԱՀ-ի մուտքերի աճով: ԱԱՀ-ի մուտքերի վրա դրական ազդեցություն են գործել տնտեսական գործունեության ոլորտներում ստեղծված ավելացված արժեքների և սպառման ծավալների աճը, հարկունակ ոլորտների իրացման շրջանառությունների, ինչպես նաև ներմուծման աճը: ԱԱՀ-ի գծով մուտքերի վրա ազդող դրական գործոններից հարկ է նշել նաև գնաճի գործոնը, որը պայմանավորված է եղել սպառողական գների 7.2 % և ներմուծման գների 10.9 % աճով: Ըստ այդմ՝ ԱԱՀ-ի գծով մուտքերի աճը կազմել է շուրջ 14.8 մլրդ դրամ: Միաժամանակ, ԱԱՀ-ի գծով մուտքերի վրա բացասաբար է ազդել ԱԱՀ-ի գծով վերադարձված գումարների աճը, որոնք, 2021 թվականին կազմել են 146.7 մլրդ դրամ՝ 22.2 %-ով կամ 26.6 մլրդ դրամով գերազանցելով 2020 թվականի ցուցանիշը: 2021 թ. ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 1.587.0 մլրդ դրամ հարկային եկամուտներ³:

Սա նշանակում է, որ 2021 թ. ընդհանուր հարկային եկամուտներում ԱԱՀ-ի գծով մուտքերը կազմել են համախառն հարկային եկամուտների գրեթե 45 %-ը (ԱԱՀ-ի գծով վերադարձված գումարներ՝ 146.7 մլրդ դրամ + 2021 թ. փաստացի ԱԱՀ՝ 556.0 մլրդ դրամ), ինչը ֆիսկալ առումով դրական առաջընթաց է՝ հաշվի առնելով նաև հարկեր/ՀՆԱ արդյունավետության գործակցի վրա դրա դրական ազդեցությունը (որքան բարձր է ԱԱՀ-ի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, այնքան ավելանում է ԱԱՀ-ի արդյունավետության գործակիցը):

Աղյուսակ 2-ում ԱԱՀ-ի արդյունավետության գործակիցը յուրաքանչյուր երկրի համար հաշվարկվել է որպես ՀՆԱ-ում ԱԱՀ-ի մասնաբաժնի և 2022 թ. այդ երկրներում գործող ԱԱՀ-ի դրույքաչափի հարաբերություն: ՀՆԱ-ի և ԱԱՀ-ի ցուցանիշները 2020-2022 թթ. համար միջինացվել են:

Աղյուսակ 2-ի տվյալներից երևում է, որ որքան մեծ է ԱԱՀ-ի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, այնքան բարձր է ԱԱՀ-ի արդյունավետության գործակիցը: ՏԶՀ անդամ երկրներում ԱԱՀ-ի միջին դրույքաչափը կազմում է 19.3 %⁴, ինչը նշանակում է, որ այդ երկրների գրեթե երկու երրորդն ունի ԱԱՀ-ի 20 % և ավելի դրույքաչափ: ՀՀ-ում գործող ԱԱՀ-ի

³ Տե՛ս նույն տեղը, էջ 11:

⁴ Տե՛ս OECD, Consumption tax trends 2020, VAT/GST and Excise Rates, Trends and Policy Issues, (Paris OECD Publishing, 2020), URL: https://www.oecd-ilibrary.org/taxation/consumption-tax-trends-2020_152def2d-en (հասանելի է՝ 03.10.2022):

դրույքաչափը համեմատելով ՏՉՀ անդամ և զարգացած այլ երկրներում գործող ԱԱՀ-ի դրույքաչափի հետ՝ կարելի է նկատել, որ այն հիմնականում համահունչ է տնտեսապես զարգացած երկրների միջին ցուցանիշին: Մակայն, եթե այս ցուցանիշը համեմատենք ԵԱՏՄ անդամ պետությունների և Հայաստանի նման տնտեսական մոդել ու հարկային համակարգ ունեցող երկրների հետ, ապա այն բավականին բարձր է, ինչը նշանակում է, որ, չնայած ԱԱՀ-ի բարձր դրույքաչափին, հավաքագրված հարկային եկամուտների մակարդակը ցածր է: Սա էլ, իր հերթին, նշանակում է, որ ԱԱՀ-ի հոսքերի կառավարման արդյունավետությունը բարձր է, սակայն ցածր են հարկազանձման դիվերսիֆիկացիան ու տարբերակված հարկային եկամուտների ներհոսքը:

Աղյուսակ 2

Հայաստանում և որոշ երկրներում ԱԱՀ-ի արդյունավետության համեմատական գնահատականը 2020-2022 թթ.

ԵՐԿԻՐ	ԱԱՀ-ի դրույքաչափը ⁵ , %	ԱԱՀ-ի բեռը (ԱԱՀ/ՀՆԱ, %) ⁶	ԱԱՀ-ի արդյունավետության գործակիցը
Հայաստան	20	7.9	0.39
Վրաստան	18	1.11	0.06
Ռուսաստան	20	3.25	0.16
Ադրբեջան	18	0.02	0.1
Բելառուս	20	0.22	0.01
Ղազախստան	12	0.15	0.01
Մոլդովա	20	17.3	0.86
Թուրքիա	18	6.8	0.38
ՏՉՀ միջին	19.3	11.19	0.58

Մյուս կողմից՝ զարգացած երկրներում հարկային բեռի մակարդակը բարձր է, և բնակչության կենսամակարդակն աճում է, իսկ ՀՀ-ում հարկային բեռը համեմատաբար բարձր է, բայց կյանքի որակը չի բարելավվում: Սրա հիմնական պատճառը տնտեսության հարկային ներուժի սոցիալական ու տնտեսական անհավասարակշռությունն է:

Բացի այդ, հաշվարկման վերոնշյալ մեթոդի թերություններից մեկն այն է, որ հաշվարկը կատարվում է ընդհանուր տնտեսության մակարդակով, քանի որ ՀՆԱ-ն որոշակի ժամանակահատվածում, սովորաբար մեկ տարում, երկրի տնտեսությունում արտադրված վերջնական ապրանքների ու ծառայությունների շուկայական արժեքների գումարն է⁷, հետևաբար արտադրության ընթացքում կիրառված մի-

⁵ URL: <https://taxsummaries.pwc.com/quick-charts/value-added-tax-vat-rates> (հասանելի է՝ 08.10.2022)

⁶ Տվյալները հաշվարկվել են հեղինակի կողմից՝ ըստ Համաշխարհային բանկի վիճակագրության, URL: https://data.worldbank.org/indicator/GC.TAX.GSRV.CN?fbclid=IwAR06uWeGJsieGaUXS38xadZ-q7KcCxUBAgVcBbVSpIh-IDJhqShdc0IGZL4&most_recent_year_desc=true (հասանելի է՝ 08.10.2022).

⁷ Տե՛ս **Հ. Մարգարյան, Հ. Մարգարյան**, Տնտեսագիտության տեսություն, Եր., 2017, ԵՊՀ հրատ., էջ 156:


ջանկյալ ապրանքների ու ծառայությունների արժեքը չի մտնում ՀՆԱ-ի մեջ: Պարզ է նաև, որ ճյուղային ոլորտներում հարկային բեռի անհավասարաչափ բաշխման արդարացիությունն ու արդյունավետությունը գնահատելը բավականին բարդանում է, քանի որ ՀՆԱ-ն ըստ տարածաշրջանների, Հայաստանի դեպքում՝ ըստ մարզերի չի հաշվարկվում: Այս համատեքստում կարևոր է առանձին-առանձին հաշվի առնել տնտեսության յուրաքանչյուր ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում և համախառն հարկային եկամուտներում:

Հարկման արդյունավետությունը գնահատող մեկ այլ ցուցանիշ է ուղղակի և անուղղակի հարկերի տոկոսային հարաբերակցությունը, որը պատկերացում է տալիս հարկման արդարության սկզբունքի կիրառման մասին: Եթե անուղղակի հարկերի մասնաբաժինը մեծ է, ապա հարկման արդարության սկզբունքը չի պահպանվել, քանի որ անուղղակի հարկերը ներառվում են ապրանքների ու ծառայությունների գնի մեջ, իսկ դրանց վերջնական վճարողը սպառողն է, այսինքն՝ հարկային բեռը տեղափոխվում է ֆիզիկական անձանց վրա:

ՀՀ-ում 2021 թ. հարկային եկամուտների 35 %-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը անուղղակի հարկատեսակ է: Ընդհանուր առմամբ, եթե ԱԱՀ-ին գումարենք ակցիզային հարկը (սպառման հարկեր), ապա կստանանք անուղղակի հարկերը, որոնք ձևավորում են համախառն հարկային եկամուտների 42.1 %-ը:

Գծապատկեր 1

Հարկային եկամուտների կշիռն ընդամենը հարկերի մեջ ըստ հարկատեսակների, 2021 թ.⁸



⁸ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տրամադրած վիճակագրական տվյալների:

Միաժամանակ, եկամտային հարկը, շահութահարկն ու շրջանառության հարկը ուղղակի հարկեր են (արտադրության գործոնների հարկեր) և կազմում են համախառն հարկերի 38.9 %-ը: Սա նշանակում է, որ հարկային բեռը հիմնականում ուղղված է սպառմանը (որի հիմնական կրողները սպառողներն են) և բացասական ազդեցություն է ունենալու բնակչության կենսամակարդակի վրա հարկատուների գնողունակության առումով: Ուստի շատ կարևոր է, որ պետությունը կարողանա բոլոր տեսակի ապրանքների գծով գնահատել ապրանքի գնով պայմանավորված պահանջարկի առաձգականությունը այն ապրանքների համար, որոնց վրա ցանկանում է հարկեր կիրառել:

Հարկային բեռի անհավասարաչափ բաշխումը նպաստում է եկամտուների անհավասարությանը, ինչն էլ իր հերթին ստիպում է հարկատուներին խուսափել հարկային պարտավորություններից՝ մեծացնելով ստվերային շրջանառության ծավալների աճի հավանականությունը: Այս տեսանկյունից սոցիալական անհավասարության զգացումը մեծացնում է կառավարության նկատմամբ անվստահությունը՝ հարկատուներին դրդելով շրջանցելու հարկերը⁹: Ուստի հարկային բեռի հաշվարկման բանաձևում պետք է ներառել ստվերային դաշտը:

Դա հաշվի առնելով՝ բանաձևը կունենա հետևյալ տեսքը.

$$ՀԲՄ = (ՀԳվ + ՄՎվ + ՀԱ - ՀԿ - ՀԳ + ՀՎԾ) / (ՀՆԱ (1 + ՄՏԾ)) ,$$

որտեղ ՀԲՄ - ն հարկային բեռի մեծությունն է, ՀԳվ - ն՝ վճարված հարկերի գումարը, ՄՎվ - ն՝ վճարված սոցիալական վճարումների գումարը, ՀԱ - ն հարկային ապառքների ընդհանուր գումարն է, ՀԿ - ն հարկային կանխավճարներն են, ՀԳ - ն հարկային գերավճարներն են, ՀՎԾ - ն հարկատուների կողմից կատարվող վարչարարական ծախսերը, ՄՏԾ - ն ստվերային տնտեսության ծավալն է տոկոսային արտահայտությամբ¹⁰, ՀՆԱ - ն համախառն ներքին արդյունքը:

Բանաձևից պարզ է դառնում, որ ստվերային տնտեսության մեծ ծավալը ավելացնում է բանաձևի հայտարարը, հետևաբար փոքրացնում է հարկային բեռի ցուցանիշը: Հարկային բեռի ցուցանիշի նվազումը ևս մեկ անգամ վկայում է, որ հարկատուները դրսևորում են ոչ օրինապահ վարքագիծ (փորձում են ամեն կերպ խուսափել հարկեր վճարելուց, ձեռք են բերում ստվերային ապրանքներ ու ծառայություններ համեմատաբար ավելի ցածր գներով)՝ այդպիսով մեծացնելով ստվերային շրջանառության ծավալները: Հարկատուների տնտեսական վարքագծի փոփոխությունը փաստում է հարկի հավելյալ բեռի առկայության մասին: Ուստի հարկման արդյունավետության տեսանկյունից ստվերային տնտեսության ծավալների աճը հակառակ համեմատա-

⁹ Տե՛ս E. Ahmed, J. Rosser, M. Rosser, Income inequality and the informal economy in transition economies // Journal of Comparative Economics, Vol. 28, № 1, 2000, էջ 156-171:

¹⁰ Տե՛ս Գ. Կիրակոսյան, Տ. Հարությունյան, Հարկային բեռի արդարացի բաշխման և վարչարարության բարելավման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2014, 104 էջ:

կան է հարկային բեռի ցուցանիշին: Այսինքն՝ որքան հարկային բեռը փոքր է երկրում, այնքան մեծ կարող է լինել ստվերային տնտեսության ծավալները: Ստվերային տնտեսությունը բացասական ազդեցություն է ունենում վերոշարադրված հարկեր/ՀՆԱ ցուցանիշի վրա, քանի որ չգրանցված շրջանառության կամ բանավոր պայմանավորվածությունների արդյունքում օրենքներով սահմանված ձևակերպումները խախտելով՝ նախատեսվածից ավելի փոքր գումարներ են վճարվում ԱՀՀ-ի, եկամտային հարկի կամ շրջանառության հարկի փոխարեն՝ նվազեցնելով ինչպես համախառն հարկային եկամուտների իրական մակարդակը, այնպես էլ տնտեսության տարբեր ոլորտների մասնաբաժինը ՀՆԱ-ում: Սակայն ՀՀ-ում ստվերային տնտեսության չափերի գնահատման ու դրա դեմ պայքարի համար պետք է հաշվի առնվեն ոչ միայն պետական բյուջե չհավաքագրված հարկային մուտքերը (ստվերային տնտեսության առկայության դեպքում), այլև դրա հետևանքով առաջացած սոցիալական խնդիրները, ոչ ֆորմալ հարաբերություններով պայմանավորված՝ տնտեսավարող սուբյեկտների որոշ մասի հարստանալու լրացուցիչ հնարավորությունները, մրցակցային միջավայրի անբարենպաստ պայմանները և ստվերային տնտեսության պատճառով սոցիալապես խոցելի խավի տնտեսական ակտիվության նվազումը: Այս առումով կարևոր է այն համոզմունքը, որ բոլորը հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանվածության իրավունք¹¹, իսկ հարկեր վճարելը համապարտադիր է:

Ամփոփելով կատարված վերլուծությունը՝ կարելի է եզրահանգել, որ հարկման արդյունավետությունը գնահատելը բավականին բարդ, սակայն իրականացվելի խնդիր է: Հարկման արդյունավետությունը բարձրացնելը հիմնականում պայմանավորված է դրա իրականացման միջոցներով ու ուղղություններով: Հողվածում կատարված վերլուծությունների համաձայն՝ հարկման արդյունավետության մակարդակը կբարձրանա, եթե պետությունը կարողանա հավասարակշռել իր ֆինանսական միջոցների պահանջարկն ու հարկատուների վճարունակությունը՝ հաշվի առնելով նրանց կենսամակարդակն ու սոցիալական պատկանելությունը: Այլ կերպ ասած՝ հարկային քաղաքականությունն ու վարչարարությունը մշակելիս պատասխանատու մարմինը պետք է սահմանի այնպիսի հարկեր և հարկային դրույքաչափեր, որ նվազագույն հավելյալ հարկային բեռ ավելացնելով՝ կարողանա նախապես նպատակադրած բյուջեի մուտքեր (հարկային եկամուտներ) ապահովել՝ այդպիսով նվազագույնի հասցնելով տնտեսական անարդյունավետությունն ու ստվերային շրջանառության ծավալների ընդլայնումը, քանի որ հարկերը պետության կողմից կիրառվող տնտեսական հարա-

¹¹ Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունված և հռչակված Ընդհանուր վեհաժողովի 1948 թ. դեկտեմբերի 10-ի 217 A (III) բանաձևով, հոդված 7, էջ 2:

բերությունները կարգավորող ամենակարևոր գործիքներից են: Հարկային համակարգի ներգործությունից տնտեսական արդյունք ստանալն անհնար է դիտարկել պետության մեջ կատարվող սոցիալ-տնտեսական գործընթացներից կտրված, քանի որ հարկերը, բացի ֆիսկալ դերից, ունեն նաև վերաբաշխիչ ու կարգավորիչ դեր՝ համապատասխանաբար լուծելով սոցիալական ապահովության ոլորտի խնդիրներ ու ստեղծելով գործարար միջավայրի բարելավման պայմաններ:

МЕРИ ПАНОСЯН – Проблемы оценки социально-экономической эффективности налогообложения в РА. - В статье рассматривается индекс соотношения налог/ВВП, характеризующий эффективность налогообложения, индекс процентного соотношения прямых и косвенных налогов в РА и влияние объема теневого оборота с точки зрения эффективности налогообложения. В результате анализа стало ясно, что хотя эффективность управления потоками НДС в РА высока, диверсификация налогообложения и поступление дифференцированных налоговых доходов низки, налоговая нагрузка в основном направлена на потребление, что сказываясь на уровне покупательной способности, также влияет на эластичность спроса, будучи обусловленной ценой товара, наряду с высокой налоговой нагрузкой качество жизни населения низкое, а также существует причинно-следственная связь между поведением налогоплательщиков и объемом теневого оборота. Основной причиной этих проблем является социально-экономическая несбалансированность налогового потенциала экономики.

Оценка уровня эффективности налогообложения с использованием вышеизложенных методов достаточно сложна и неоднозначна, поскольку расчет этих показателей требует обоснованного сочетания и последовательной защиты интересов всех социальных групп, обоснования справедливости неравномерного распределения налогового бремени в отраслевой сфере, а также формирование законопослушного поведения налогоплательщиков за счет сокращения объемов теневого оборота. Однако уровень эффективности налогообложения повысится, если государство сможет сбалансировать потребность в своих финансовых ресурсах и платежеспособность налогоплательщиков с учетом их уровня жизни и социальной принадлежности.

Ключевые слова: коэффициент налоговой эффективности, валовой внутренний продукт, налоговое бремя, принцип справедливости, прямые налоги, косвенные налоги, теневая экономика, социальная несправедливость

MERI PANOSYAN – Problems of Assessment of Social and Economic Efficiency of Taxation in the RA. – The article examines the tax/GDP ratio characterizing the efficiency of taxation, the percentage ratio of direct and indirect taxes in the RA, and the influence of the volume of shadow circulation from the point of view of the efficiency of taxation. As a result of the analysis, it became clear that although the efficiency of VAT flow management in Armenia is high, the diversification of tax levy and the inflow of differentiated tax revenues are low, the tax burden is mainly aimed at consumption, which, affecting the level of purchasing power, also affects on the elasticity of demand caused by the price of the product, along with the high tax burden, the quality of life of the population is low, and there is also a causal relationship between the behavior of taxpayers and the volume of shadow turnover. The main reason for these problems is the social and economic imbalance of the tax potential of the economy.

Estimating the level of taxation efficiency using the above mentioned methods is

quite complicated and ambiguous, because the calculation of these indicators requires a justified combination and consistent protection of the interests of all social groups, justification of the fairness of the uneven distribution of the tax burden in branch spheres, and the formation of law-abiding behavior of taxpayers by reducing the volume of shadow circulation. Nevertheless, the level of taxation efficiency will increase if the state can balance the demand for its financial means and the solvency of taxpayers, taking into account their standard of living and social belonging.

Key words: *coefficient of taxing efficiency, gross domestic product, tax burden, principle of justice, direct taxes, indirect taxes, shadow economy, social inequality*